ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ՀՄԱՊՁԲ-19/123 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «02» Սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 02-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ *ԵՋԷԿ-ՀՄԱՊՁԲ-19/123* ծածկագրով (հակահրդեհային համակարգի սնուցման բլոկի, կոշտ սկավառակների և անալոգային փոխակերպիչների ձեռքբերման) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍ ԱԿ և ՄԻԲ-ի պետի պ/կ.
Ս. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍ ԱԿ և ՄԻ բաժնի պետի տեղակալ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով:
Բ. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավաբան.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արկադի Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի, վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արկադի Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Գազատուրբինի հակահիդեհային համակարգի սնուցման բլոկ	143000
2.	Անալոգային փոխակերպիչ	45000

ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի օգոստոսի 23-ին, ժամը «17:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը /.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ ՍՊԸ	Ամառանոցային 34	info@ekra.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացրած հայտում առկա փաստաթղթերի՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի և մասնակցի զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	-	ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ	118800	142560

Որոշվեց՝

1. Արկադի Գրորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:
4. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել ապահովել լրացուցիչ ստուգում՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին կատարելով հարցում արդյոք «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր է թե՞ ոչ:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում եկել է համապատասխան եզրակացությունը, ըստ որի «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ :

Որոշվեց՝

1. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/123 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Դ. Մադոյան _____

Ս. Հարությունյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Պետրոսյան _____

Բ. Հարությունյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____